

## Պետք է փորձենք ազատվել այս օկուպացիայից



Տարբեր բողոքի ակցիաներից բերման ենթարկված ակտիվիստների դեմ ոստիկանության կողմից բազմաթիվ վարչական վարույթներ են հարուցված, որոնք քննվում են ՀՀ վարչական դատարանում: Ակտիվիստների շահերը դատարանում ներկայացնող փաստաբաններից մեկը Արտակ Զեյնալյանն է, ում հետևիքը և զրուցեցինք դատական գործընթացի ընթացքում տեղ գտած դրական և բացասական իրողությունների մասին:

Պարոն Զեյնալյան, վերջին տարիներին ակտիվացել են քաղաքացիական շարժումները, որոնք հանդես են գալիս հանրային շահի պաշտպանության դիրքերից՝ կազմակերպելով ամենատարբեր բողոքի ակցիաներ: Սրան գուցահեռ մենք տեսնում ենք ոստիկանության միջամտությունը, որն ուղեկցվում է ակտիվիստներին բերման ենթարկելու գործընթացով: Տևական ժամանակ է իրավիճակը այսպիսին է: Ինչ դրական և բացասական միտումներ եք արձանագրել այս ընթացքում:

Դրականը. հավանաբար, այն է, որ ակտիվիստները գործնականում ծանոթանում են իրավունքների հետ, իրենց իրավունքների խախտման միջամտության հետ, գիտակցում են, թե ինչպես է դա լինում և տարածվում է գիտելիքներն այս ոլորտում: Ընդհանուր առմամբ բարձրանում է քաղաքացիական ակտիվիստների իրավագիտակցությունը: Բացասականն այն է, որ իշխանությունները որևէ կերպ իրենց վարքագիծը չեն փոխում, ինչպես եղել է 2000-2001թթ-ին, այդպես էլ մնացել է: Ռեժիմի վարչական կալանքի ենթարկելու հոգեբանությունը չի փոխվել: Ըստ էության իրենք օկուպացիոն գործերի տեղական սպասարկուներն են, այդպես են իրենց պահում: Լինելով նույն համայնքից, որոշակի արտոնություններ ստանալու համար օկուպացիոն իշխանություններից հնարավորինս ավելի մեծ ճնշում են գործադրում ժողովրդի վրա:

Վարչական դատարանում շուրջ 500 վարչական վարույթներ կան հարուցված ակտիվիստների դեմ: Վերջին շրջանում ոստիկանությունը շատ անգամ հրաժարվում էր դատարան ներկայացրած հայցերից, բայց մյուս կողմից տեսնում ենք նաև ոստիկանական բռնի գործողությունները բողոքի ակցիայի մասնակիցների դեմ և նոր վարչական վարույթների հարուցում: Ինչով եք սա բացատրում:

Բերման ենթարկելու պրոցեսը ոստիկանությունն օգտագործում է մարդկանց պատժի ենթարկելու, հավաքը փչացնելու համար, իսկ թե հետո ինչ կլինի, դա էական չէ: Էդ պահին դա են իրականացնում, իսկ հետագան կարևոր չէ: Հետագան հյուծող, մաշող ժամանակատար պրոցեսներ են: Իրենք էլ են թույլ, որովհետև իրենց ռեսուրսները

սահմանափակ են, չեն կարող սպասարկել այսքան պրոցես: Պետության ռեսուրսներից դուրս է այսքան պրոցեսները սպասարկելը: Այսինքն, ակտիվությունն ավելի մեծ է քան ոստիկանական ռեսուրսները: Ճանապարհային երթևեկության իրավահարաբերությունների մեջ պարզեցրել են ամեն ինչ և միայն թղթով են անում դա, փող են հավաքում, այլապես չեն կարող այդքանը սպասարկել: Հասարակության մեջ համերաշխության ընկալում պիտի լինի, որ ինքն է իրավիճակի ու պետության տերը, իսկ պաշտոնատար անձինք ընդամենը ժամանակավոր ծառայող անձինք են: Պետական պաշտոնատար անձինք էլ պիտի գիտակցեն, որ ժողովրդի ծառայողներն են և ընդամենը նպաստում են այդ շահի պաշտպանությանը, սպասարկմանը, իրավիճակի բարելավմանը, որպեսզի բնական հարաբերություններն ավելի մեծ էֆեկտ ու արդյունք տան, ինչն իսպառ բացակայում է: Բացակայում է ինքնիշխանության ատրիբուտներից մի քանիսը, տվյալ դեպքում յուրային իշխանությունը, դրա համար է այսպիսի կոնֆլիկտային իրավիճակ, յուրային կառավարությունը բացակայում է:

Որպես դրական արդյունք դրուք ընդգծեցիք քաղաքացիական ակտիվիստների իրավագիտակցության բարձրացումը: Արդյոք, այդ առումով շատ մեծ չէ անհամապատասխանությունը ոստիկանության աշխատակիցների և գիտակից քաղաքացիների միջև: Մենք դատարաններում կամ վեճերի ժամանակ տեսնում ենք խեղճ ու տգետ ոստիկանների:

Անհամապատասխանությունը շատ մեծ է: Ոստիկանությունը շարունակում է մնալ նույն սովետական ոստիկանությունը, եթե հիշում եք, այսօրվա դատրական նիստում ես լրացուցիչ միջնորդեցի ոստիկանության ուշադրությունը հրավիրել հանգամանքի վրա, որպեսզի քաղաքացին կատարի ոստիկանի պահանջը: Ոստիկանը պիտի հիմնավորի իր այդպիսի պահանջ ներկայացնելու իրավունքը, այն որ ինք օժտված է պետաիշխանական կարգադրիչ լիազորությամբ, որ իր պահանջը օրինական է՝ համապատասխան հղումով և որ այդ պահանջը չկատարելու դեպքում ինչպիսի հետևանքներ կարող են լինել: Եվ երրորդ՝ ոստիկանը պետք է հնարավորինս ձեռնպահ մնա վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթ նախաձեռնելուց: Դա պետք է հետապնդի բացառապես բացատրական նպատակ, սովորեցնելու, գիտակցությունը բարձրացնելու նպատակ, որովհետև, տվյալ դեպքում քաղաքացին, անձը ոտնձգություն չի իրականացնում ոստիկանության գրամանատարի նկատմամբ: Եթե ոստիկանը ծառայում է հասարակությանը պետք է բացատրի, որ դա հասարակության դեմ է ուղղված:

Բայց իրենք գիտակցում են այն, ինչ հիմա դուք ասում եք: Ընդհանրապես ինչին են միտված ոստիկանական գործողությունները բողոքի ակցիաների ժամանակ:

Ոչ, իրենք չեն գիտակցում: Նրանք շարունակում են պահպանել սովետական պատժիչ ռեժիմը: Նրանք ծառայում են ռեժիմին: Նրանց գործողությունները միտված են իշխանությունը պահելուն և դա որևէ առնչություն չունի հասարակության հետ: Նրանց վարքագիծը, արհամարական վերաբերմունքը մարդկանց նկատմամբ: Մարդկանց նսեմացնող, իրենց մարդուց բարձր դասող վարքագիծ է: Վերջին օրինակը Էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման դեմ ուղղված բողոքի

ակցիան է, որի ժամանակ ոստիկանն ասել էր՝ «կատոկ արեք դրանց»: Սա է իրականությունը:

Անդրադառնանք դատարանի կողմից բավարարված համարվող հայցերին, որոնց մասին դուք ասացիք, որ դրանք ամբողջությամբ բավարարված չեն և չեն արտացոլում ձեր կողմից ներկայացված հակընդդեմ հայցերի պահանջը: Ինչ է դա նշանակում:

Դատարանների կողմից կայացրած, այսպես ասած բավարարված այդ ակտերը շատ վտանգավոր են, ուղղակի մեխանիկական լուծում է տրված: Հսկայական քանակությամբ ոստիկանության հայցերից այսքանը պիտի բավարարվեն, իսկ այսքանը մերժվեն: Օրինակ, սեպտեմբերի 4-ի մաքսային միության հետ կապված Բաղրամյան 26-ի մոտ բողոքի ակցիայով բոլոր հայցերը պիտի մերժվեն և բոլորը պիտի պատժվեն: Կամ մեղադրանքը ներկայացված է, դուրս են եկել երթևեկելի հատված, պիտի ենթարկվեն պատասխանատվության, միակ մնացած դեպքերում ոստիկանության հայցերը պիտի մերժվեն: Ընդհանուր գնահատումից էդպես եմ հասկանում: Ոչ թե իրավունքի հարցն է լուծված, այլ այս դեպքի հետ կապված էդպես են լուծում հարցը: Էդպիսի իրավակիրառում գոյություն չունի:

Այսինքն բավարարված հայցերը քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին չեն վերաբերվում:

Ոչ, դրանք կոնկրետ քվոտային են վերաբերում, դրանով քվոտայի հարց են լուծել, ես այդպես եմ ընկալում: Որ չեն կարողացել ոստիկանության բոլոր հայցերը բավարարել, մի մասը գոնե պիտի մերժեն ինչ որ բան ցույց տալու համար: Սա ձևական բնույթ է կրում, գիտեն, որ այս գործերով դիմելու ենք եվրոպական դատարան: Հայցերի մի մասը չենք բողոքարկել նպատակ ունենալով որոշակի խնդիրներ լուծել ընդհանուր պրոցեսի մեջ՝ տակտիկական նկատառումներից ելնելով, բայց այդ դատական ակտերը պատճառաբանված դատական ակտեր չեն: Մեր բարձրացված հարցերի պատասխանը տրված չէ, հարցերն առանց քննության են թողնվել: Մեր հայցը բավարարել են, բայց իրավունքի պաշտպանություն չենք կարողացել իրականացնել: Սա, իհարկե, չի վերաբերում Լևոն Բարսեղյանի գործով կայացված դատական ակտին, որը շատ բարձր մակարդակի դատական ակտ էր: Այս դատական ակտերը այդպիսին չեն: Հետագայում, կարծում եմ, մեր բողոքները չեն բավարարվի, վերաքննիչ դատարանը կհաստատի առաջին աստիճանի դատական ակտերը: Դատարաններն անկախ չեն լինի: Սա իրատեսական է:

Պետք է արձանագրենք, որ ակտիվիստները, այդուհանդերձ, շարունակում են պայքարել, չնայած ոստիկանության բռնի գործելառձին: Ինչքան կարող է այսպես շարունակվել: Պետք է պայքարը ավելացնել, շատացնել, որպեսզի նրանք, ուղղակի, հյուժվեն: Պետք է բոլոր ճակատներով պայքարել, ներպետական դատարաններում բոլոր աստիճաններում պայքարել, տեղեկատվությունը տարածելով պայքարել, պետք է օգտագործել միջազգային կազմակերպություններին իշխանությունների վրա ճնշում գործադրելու համար, բոլոր ուղղություններով անհրաժեշտ է պայքարել:

Բայց հիմա Հայաստանը սրբնթաց գնում է Մաքսային միություն, որտեղ բոլորովին այլ արժեքներ են, այս առումով ոչ լավատեսական:

Սա սովետական միություն թիվ 2-ն է, որտեղ այլ արժեքային համակարգ էր՝ հակամարդկային էր, առավել իշխանակենտրոն էր և այդ համակարգի հերոսն էր այսօրվա իշխանական համակարգի Միկոյանը: Պետք է փորձենք ազատվել այս օկուպացիայից, որպեսզի մեր իրավունքները պաշտպանված լինեն, որպեսզի կարողանանք ազատվել այս ոստիկաններից ու ոստիկանական համակարգից: Պիտի դառնանք այն երկիրը, որտեղ վարչական պատասխանատվությունը բացառիկ միջամտության ձև է: Մեր երկրում տարեկան 2 միլիոնի չափ վարչական պատասխանատվության որոշում է կայացվում, որոնցից միայն մեկ ու կես միլիոնը՝ ճանապարհային ոստիկանության կողմից: Ակտիվիստների մի քանի հարյուր գործեր կան վարչական դատարանում ոստիկանի օրինական պահանջը չկատարելու համար: Մեր երկիրը չի կարող իրեն այսպիսի ճոխություն թույլ տալ և ռեսուրսները օգտագործել այսպիսի բաների վրա: Սա անպտուղ բան է, սա անարդյունավետ կառավարում է, սա կոռուպցիա է:

**Ժաննա Ալեքսանյան**

[http://forrights.am/?ln=1&id\\_=20&page\\_id=63](http://forrights.am/?ln=1&id_=20&page_id=63)